Биолог. журн. Армении, 1-2 (55), 2003

ՈՒԴԿ 581.9.502.72

ՋՐՎԵԺԻ ԱՆՏԱՌՊԱՐԿԻ ԲՈՒՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Վ.Ե. ՈՍԿԱՆՅԱՆ, Վ.Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ, Ա.Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արգելոցապարկային համալիր, Ջրվեժ, 375089, Երևան
ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտ, 375063, Երևան

The status of preserve to Jrvezh forest-park for keeping of exceptionally rich biodiversity of fauna is proposed.

Բուսականություն - ֆլորա - կենսաբազմազանություն

Ջրվեժի անտառպարկը Արգելոցապարկային համալիրի յուրօրինակ բնապահպանական օբյեկտներից մեկն է: Կազմակերպվել է 1977 թ., զբաղեցնում է 404 հա բարդ ու կտրված ռելիեֆով տարածք: Գտնվում է Ողջաբերդի լեռնաբազուկի ցածրադիր գոտում ծ.մ.1100-1700մ բարձրությունների սահմաններում: Տարածքը էկոլոգիապես անբարենպաստ է ծառաթփային բուսատեսակների կենսագործունեության համար: Սահմանափակող հիմնական գործոնը հողի խոնավությունն է, օդի չորությունն ու շոգը վեգետացիայի շրջանի երկրորդ կեսին: Այդ շրջանում բնական բուսական համակեցություններում տեղի է ունենում աճի ու զարգացման ճնշվածություն, դադար: Ամբողջապես ավարտվում է էֆեմերային խմբավորումների բույսերի վեգետացիան: Այն վերսկսվում է աշնան սկզբներին, անձրևներից անմիջապես հետո:

Բնակլիմայական ծայրահեղ պայմաններում հսկայածավալ ֆինանսական ներդրումների շնորհիվ՝ մասնավորապես ոռոգման հզոր համակարգի ստեղծմամբ,հիմնվել է անտառպարկ, որը իրավմամբ կարելի է դասել լանդշաֆտային պարկաշինարարության եզակի նմուշների շարքին:

Անտառտնկարկները կազմում են տարածքի շուրջ 60%–ը: Ներմուծված ծառատեսակները ներկայացված են 103 տեսակներով, որոնք պատկանում են 29 ընտանիքի և 61 ցեղերի: 67 տեսակը ծառեր են: Ներմուծված ծառատեսակներից 4-ը գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում (գիհի բազմապտուղ, Գ.կազակական, Սոսի արևելյան, Նշենի նաիրյան):

Անտառպարկի տարածքի զգալի մասը խոպան հողեր են՝ երկրորդային խոտային բուսական խմբավորումների բազմազանությամբ: Առավել զառիթափ լանջերը չխախտված բնական հանդակներ են՝ շատ թե քիչ լավ արտահայտված առաջնային բուսականությամբ՝ այդ թվում օշինդրային, տրագականտային գազերի ֆորմացիաներ: Առանձին կղզյակներով հանդիպում են հացազգատարախոտային խմբավորումներ՝ վայրի ցորենի մասնակցությամբ:

Գտնվելով կիսաանապատային և լեռնատափաստանային գոտիների շփման ոլորտում, տարածքը աչքի է ընկնում նաև ֆլորայի բացառիկ հարստությամբ ու կենսաձևերի մեծ բազմազանությամբ: Նման մեծ բազմազանությամբ աչքի է ընկնում նաև Երեբունի արգելոցը [1]:

Ջրվեժի անտառպարկի ծաղկավոր բույսերի ֆլորան կազմված է 57 ընտանիքի և 247 ցեղի պատկանող 412 տեսակներից (առանց ներմուծված ծառաթփատեսակների): 195 տեսակ (47,3%) բազմամյա պոլիկարպ խոտաբույսեր են,169 (41%) մոնոկարպ՝ այդ թվում 142 միամյաներ: Հանդիպում են 23 տեսակ թփեր ու կիսաթփեր և 2 ծառատեսակ*:

Այսպիսով, 404 հա տարածքում հանդիպում է «Երևանի» Ֆլորայի (Արարատյան գոգավորության) ավելի քան 28% կամ Հայաստանի ֆլորայի գրեթե 13%:

Բնական ֆլորայի շուրջ 30 տեսակ անհապաղ պահպանության կարիք ունի: 17 տեսակ՝ որպես հազվադեպ ու անհետացող ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում (Շովիցիա գեղապտուղ, Ակտինոլեմա խոշորաբաժակ, Վարդատերեփուկ մուշկային, Կանգար Տուրնեֆորի, Իշակաթնուկ որդակիր, Մատուտակ մերկ, Վիկ կապադոկյան Քրքում հրաշալի, Թրաշուշան մուգ մանուշակագույն, Հիրիկ նրբագեղ, Հ.ցանցավոր, Խլոպուզ եռավարսանդ, Ցորեն արարատյան, Ց.վայրի միահատիկ, Կարմրան ութառէջանի, Թեզիում սեղմված, Թ.Շովիցի):

Անտառպարկի և նրան հարող տարածքների ֆլորան շատ հարուստ է սննդի, դեղագործական և այլ նպատակներով օգտագործվող բուսատեսակներով: Սակայն դրանց պաշարները խիստ կրճատվել են տարերային, գերծանրաբեռնված շահագործման հետևանքով: Օգտակար բուսատեսակների պոպուլյացիաներում կտրուկ նվազել է երիտասարդ անհատների թվաքանակը, որը արդյունք է վերարտադրության պայմանների մասնավորապես, վերջին տարիների, սերմնային վերաբազմացման վատթարացման:

Ներկա հետազոտության արդյունքների հիման վրա կարելի է հավաստել, որ ի հայտ է բերված ֆլորիստական հարստության արժեքավոր օջախ, որի պահպանումը կապահովի կենսաբազմազանության շարունակական վերարտադրություն և մեծապես կնպաստի կենսաբանական ու բնապահպանական ժամանակակից հիմնախնդիրների լուծմանը:

Անհրաժեշտ է վերականգնել և ընդլայնել հազվադեպ, անհետացող ու վայրի օգտակար բուսատեսակների կոլեկցիոն տնկարանը, բնական խախտված համակեցությունների բույսերի պոպուլյացիայի հասակային կազմի օպտիմիզացիայի նպատակով ստեղծել և առանձնացնել սերմնային տեղամասեր:

Նշված և տարածաշրջանային բնապահպանական բազմաթիվ այլ հիմնախնդիրների կարգավորման համար անհրաժեշտ է անտառպարկին տալ առնվազն արգելավայրի կարգավիճակ, կիրառելով որոշակի ռեժիմ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Восканян В.Е., Арутюнян А.С.* Биолог. журн. Армении, *41*, 6, 1988.

Поступила 15.XII.1999

* Հավաքվել է շուրջ 30000 նմուշ, հերբարիումը պահպանվում է ԳԱԱ-ի Բուսաբանության ինստիտուտում: